# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 91-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի օգոստոսի 13-ի թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-102-0012-կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.09980 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-105-0036-0002 կադաստրային ծածկագրով 0.07459 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում <<Ալ-Ֆուդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.24026 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-113-0020-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում համայնքի սեփականություն հանդիսացող 3.21201 եվ 2.49666 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի նպատակային նշանակությունները արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակություն, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն փոխադրելու համար համաձայնություն տալու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 08-002-0143-0049 կադաստրային ծածկագրով հողատարածք համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 10-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նիստի օր նշանակելու մասին:
   /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Ավագանու անդամներ

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդյան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Զարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29-Ն**

Արթիկ համայնք — 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 94-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> (5113) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<1500000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար>> թվով և բառերով:

2) Աղբահանում բաժնի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<2400000 երկու միլիոն չորս հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<4000000 չորս միլիոն>> թվով և բառերով:

3) Փողոցների լուսավորում բաժնի <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածում գրված <<113000 մեկ հարյուր տասներեք հազար>> թիվը և բառերը փոխարինել << 431000 չորս հարյուր երեսունմեկ հազար>> թվով և բառերով:

4) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<347782000 երեք հարյուր քառասունյոթ միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար>> թիվը և բառերը փոխարինել <<344364000 երեք հարյուր քառասունչորս միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար>> թվով և բառերով:

5) Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից <<1500000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար>> դրամ հատկացնել համայնքի ֆոնդային բյուջե:

Ավագանու անդամներ

| **Կողմ (22)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Աստոյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Ասատրյան | | |
| Մ[illegible]ան | | |

Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30-Ա**

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 91-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Թիվ 91-Ա որոշման հավելվածում <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 9-րդ կետում <<հավաքարար 1 դրույք>> թիվը և բառերը փոխարինել <<հավաքարար 16,25 դրույք>> թվով և բառերով:

2) Թիվ 91-Ա որոշման հավելվածում <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել նոր տող 11-րդ կետ՝ <<ջրագծի բանվոր 12.25 դրույք>> թվով և բառերով, և փակագծում նշված <<15 աշխատող>> թիվը և բառը փոխարինել <<52 աշխատող>> թվով և բառով:

3) Թիվ 91-Ա որոշման հավելվածի <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել նոր տող 18-րդ կետ՝ <<Մշակույթի տան պատասխանատու 18,5 դրույք>> և փակագծերում նշված <<19 աշխատող>> թիվը և բառը փոխարինել <<37 աշխատող>> թվով և բառով:

4) Թիվ 91-Ա որոշման հավելվածի <<Արթիկի գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 4-րդ կետում՝ <<գրադարանավար 9 դրույք>> թիվը և բառերը փոխարինել <<գրադարանավար 22,5 դրույք>> թվով և բառերով և փակագծում նշված <<17 աշխատող>> թիվը և բառը փոխարինել <<31 աշխատող>> թվով և բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

| **Կողմ (21)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (1)** |
|---|---|---|
| Հարությունյան | | Աստոյան |
| Տոնոյան | | |

Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2022 թվական 7 մարտի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱԿՈԲՅԱՆ 32/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ 70,45ՔՄ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ 2 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ 3-րդ մասերով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար Գագիկ Սամվելի Բզնունու 2022թվականի հունվարի 5-ի թիվ 58 դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքային սեփականություն հանդիսացող Հակոբյան 32/6 հասցեում գտնվող գրասենյակային շինությունից 70,45քմ. մակերեսով առանձնացվող տարածքը 2 տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրելու մասին» թիվ 49-Ա որոշման 2-րդ տողում «2 տարի ժամկետով» թվի և բառերի փոխարեն գրել «5 տարի ժամկետով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Սամվելի Բզնունուն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

| **Կողմ (22)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Աստոյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Ասատրյան | | |
| Մկրտչյան | | |

Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32-Ն

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-102-0012- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.09980 ՀԵԿՏԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու» կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 270 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-102-0012- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0.0998 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում քաղաքացի Մարինե Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունն ու բնակելի օժանդակ շինություններն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրած հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշմն 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Ավագանու անդամներ

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան
Հարությունյան
Տոնոյան

Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-105-0036-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.07459 ՀԵԿՏԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու» կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 266 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի վարչական սահմանում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-105-0036-0002 կադաստրային ծածկագրով 0.07459 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում քաղաքացի Մարինե Հարությունի Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տան անավարտ շինարարությունն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշմն 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Ավագանու անդամներ

| **Կողմ (22)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|

Աստոյան
Հարությունյան

Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ<<ԱԼ-ՖՈՒԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.24026 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-113-0020-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու» կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 10-ի N 2 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, <<ԱԼ-ՖՈՒԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.24026 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-113-0020-0002 կադաստրային ծածկագրով հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակություն, այդ հողամասում ինքնակամ կառուցված մսամթերքի վերամշակման արտադրամասի շինությունն օրինականացնելու, շինության և հողամասի նպատակային ու գործառնական նշանակություններին համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշմն 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Ավագանու անդամներ

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան
Հարությունյան

Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄԶԱՇԵՆ ԵՎ ՏՈՒՖԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.21201 ԵՎ 2.49666 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի նոյեմբերի 13-ի «Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի փոփոխության մասին» N 140-Ա հրամանը՝ «Արթուր-91» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված N ԼՎ-144ա լեռնահատկացման ակտում փոփոխություններ կատարելու վերաբերյալ և հաշվի առնելով «Արթուր-91» սահմանափակ պատասխանատվության ընկերության գործադիր տնօրենի 2022 թվականի փետրվարի 25-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի հարավային տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանում իրականացնելու համար նախատեսված Հայաստանի Հանրապետութան Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող (բնակավայր՝ Պեմզաշեն) 3.21201 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, որից վարելահող՝ 2.25150 հեկտար, արոտ՝ 0.89311 հեկտար, այլ հողատեսք՝ 0.06740 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 08-093-0118-հց), փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն՝ օրենքով սահմանված կարգով օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած «Արթուր-91» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից այդ հողամասում տուֆ քարի արդյունահանում իրականացնելու, հողամասը վարձակալելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակություններին համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի հարավային տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանում իրականացնելու համար նախատեսված Հայաստանի Հանրապետութան Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող (բնակավայր՝ Տուֆաշեն) 2.49666 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 08-111-0107-հց) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, ընդերքի

օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն՝ օրենքով սահմանված կարգով օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած «Արթուր-91» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից այդ հողամասում տուֆի արդյունահանում իրականացնելու, հողամասը վարձակալելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակություններին համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ավագանու անդամներ

| **Կողմ (21)** | **Դեմ (1)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Հարությունյան | Աստոյան | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Ասատրյան | | |
| Մկրտչյան | | |
| Բագդայան | | |
| Ոսկանյան | | |
| Սալնազարյան | | |
| Գևորգյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Պետրոսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 08-002-0143-0049 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսին 1-ի N 186-Ն հրամանի 9-րդ մասի 5-րդ կետի պահանջներով, և հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 14 փետրվարի 2022 թվականի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14022022-08-0118 որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Գրիգոր Լուսավորչի փողոց 23/4 հասցեում գտնվող 08-002-0143-0049 կադաստրային ծածկագրով 67,2քմ մակերեսով հողատարածքը ճանաչել, որպես համայնքային սեփականություն:

Ավագանու անդամներ

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդայան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Պետրոսյան
Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37-Ա**

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Թիվ 10-Ա որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետում ավելացնել նոր 4-րդ կետ՝ <<Քաղաքացիների սպասարկման գրասենյակի պատասխանատու 1 դրույք, աշխատավարձ՝ 210000>> և 5-րդ կետ՝ <<Մշակութային և գրադարանների ոլորտների պատասխանատու 1 դրույք, աշխատավարձ՝ 210000>> թիվը և բառերը և <<ընդամենը աշխատակազմ 144>> թվի փոխարեն կարդալ <<146>> թիվը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան
Հարությունյան
Տոնոյան
Վարդանյան
Սահակյան
Մինասյան
Ռափյան
Վարդանյան
Ասատրյան
Մկրտչյան
Բագդյան
Ոսկանյան
Սալնազարյան
Գևորգյան

Աղրամանյան

Բաղդասարյան

Գևորգյան

Հովհաննիսյան

Պետրոսյան

Գևորգյան

Պետրոսյան

Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստամի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38-Ա

Արթիկ համայնք 7 մարտի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի ապրիլի 8-ին ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

| **Կողմ (22)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Աստոյան | | |
| Հարությունյան | | |
| Տոնոյան | | |
| Վարդանյան | | |
| Սահակյան | | |
| Մինասյան | | |
| Ռափյան | | |
| Վարդանյան | | |
| Ասատրյան | | |
| Մկրտչյան | | |
| Բագդոյան | | |
| Ոսկանյան | | |
| Սալնազարյան | | |
| Գևորգյան | | |
| Աղրամանյան | | |
| Բաղդասարյան | | |
| Գևորգյան | | |
| Հովհաննիսյան | | |
| Պետրոսյան | | |
| Գևորգյան | | |
| Պետրոսյան | | |
| Չարչյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
7 մարտի 2022 թվական